ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԸ ՈՐՈՇՈՂ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Վանաձոր «16» հուլիսի 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 1-2019
ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՊԱՀԱՆՋԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի թիվ 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 18-Ն որոշումը՝ Երեխայի տարիքը որոշող Լոռու մարզային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) նախկինում ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի տարածքում բնակվող, ներկայումս Վանաձորի մանկատան սան, ծնունդը չձնակերպած Գևորգ Սարգսյանի հետ առնչվող նյութերի ուսումնասիրության հիմքով իրականացրել է վարչական վարույթ, որը ՀՀ Լոռու մարզպետարանի վարչական շենքում (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ թիվ 1) Հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 16-ին նիստի ժամանակ անցկացված վարչական լսումներով ամբողջացրել է Վանաձորի մանկատան սան Գևորգ Սարգսյանի տարիքը սահմանելու համար առաջադրված պահանջը քննելու հարցը:

ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարը 25.04.2019թ. թիվ Ե-143/19 գրությունով դիմել էր ՀՀ Լոռու մարզպետին տեղեկացնելով, որ Շահումյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից հայտնաբերվել է համայնքի 9-րդ փող. 1-ին նրբ. թիվ 1 հասցեում փաստացի բնակվող ՀՀ Արմավիրի մարզի /նախկինում՝ Հոկտեմբերյանի շրջանի/ Բամբակաշատ համայնքի բնակչուհի Արաքսի Սարգսյանը, ում հետ բնակվում է նրա որդին՝ Գևորգ անունով, որոնք չունեն անձը հաստատող փաստաթղթեր: Երեխան՝ Գևորգ Սարգսյանը ժամանակավորապես տեղափոխվել է Վանաձորի մանկատուն: Շահումյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը 13.03.2019թ. քննության է առել հետևյալ հարցերը՝ «1.Գևորգ Սարգսյանի /ըստ մոր հայտարարության/ իրավունքների և շահերի վերականգնում, նրան ժամանակավոր տեղավորում համապատասխան հաստատություն, 2. Իրավիճակի ուսումնասիրություն, դեպքի մասին տեղեկացում համապատասխան մարմիններին, 3. Առաջնային քայլերի ձեռնարկում մոր և որդու անձնագրային տվյալների վերականգնման և ստեղծման ուղղությամբ:»: Համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ կատարվել է տնային այցելություն Շահումյան համայնքի 9-րդ փող. 1-ին նրբ. թիվ 1 շինություն, որտեղ առանց հաշվառման, փաստացի բնակվում են նաև Արաքսի Սարգսյանը, նրա երկրորդ ամուսինը և որդին՝ Գևորգը: Ըստ Արաքսի Սարգսյանի հայտարարության իրենք չունի անձնագիր, այն կերել

են կրծողները, իսկ Գևորգը ընդհանրապես չի ունեցել, երեխան ոչ մի վայրում հաշվառված չի եղել, ոչ մի կրթական հաստատություն չի հաճախել: Փաստացի ծնողի կողմից ոտնահարվել է երեխայի կրթական իրավունքը: Իր մասին Արաքսի Սարգսյանը նշել է, որ ինքը ծնվել է Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղում, ավարտել է տեղի դպրոցը, ամուսնացել է և տեղափոխվել այլ համայնք և ընդհանրապես վարել է թափառաշրջիկ կյանք, տարբեր համայնքներում զբաղվել է անասնապահությամբ: Արդյունքում որոշվել է, որ Գևորգ Սարգսյանի իրավունքները պաշտպանելու համար և հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխան հուզական կապերով կապված է մոր՝ Արաքսի Սարգսյանի հետ, նրան ժամանակավորապես տեղափոխել շուրջօրյա խնամքի կենտրոն՝ Վանաձորի մանկատուն, մինչև Արաքսի Սարգսյանի փաստաթղթերը վերականգնվեն, որոնց հիմքով էլ հնարավոր կլինի լուծել որդու՝ Գևորգի փաստաթղթային հարցերը:

2. Բազմամասնագիտական հանձնաժողովը, որի կազմում են ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, Շահումյանի համայնքապետարանի, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի, Վանաձորի մանկատան և Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնի աշխատակիցները, 18.03.2019թ. քննարկելով ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ծայրամասում գտնվող քարապատ կացարանում /անասնապահական ֆերմայում հայտնաբերված, անձը հաստատող փաստաթուղթ չունեցող երեխան, որն ըստ մոր՝ Արաքսի Սարգսյանի հայտարարության ծնվել է 25.04.2004թ. ՀՀ Արմավիրի մարզի Հայկական համայնքում: Մայրը ներկայացել է որպես Արաքսի Երջանիկի Սարգսյան՝ ծնված 16.02.1972թ. ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքում, իսկ երեխայի հայրը եղել է Վարդան Հունանյանը, ով ծնունդով ՀՀ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքից է, մահացել է, երբ երեխան եղել է 1 տարեկան 6 ամսական: Փաստվել է նաև, որ երեխան Վանաձորի մանկատուն է տեղափոխվել Շահումյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 13.03.2019թ. արձանագրությամբ: Բազմամասնագիտական հանձնաժողովը աշխատանքները կանոնակարգվել է ՀՀ կառավարության 25.09.2015թ. թիվ 1112-Ն որոշման պահանջներով և խնդիր դրել հետևողականորեն կատարել հետևյալ աշխատանքները, մասնավորապես՝ ա/ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի և ՀՀ Լոռու մարզպետարանի համատեղ աշխատանքի արդյունքում լուծել Արաքսի Սարգսյանի անձը հաստատող փաստաթղթի վերականգնման աշխատանքները: բ/ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժինը հանձն է առել հարցում ուղարկել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի ծննդատուն՝ երեխայի ծննդյան գրանցման հիմքերի ճշտման համար: գ/ ՀՀ Լոռու մարզպետարանը հանձն է առել ուսումնասիրության արդյունքում պարզել Արաքսի Սարգսյանի և երեխայի հոր վերաբերյալ տվյալները, միաժամանակ հետևողական լինել երեխայի խնդիրների, առաջին հերթին՝ կրթական և առողջապահական հարցերի լուծման վերաբերյալ:

3. Շահումյան համայնքի ղեկավարը համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի փաստաթղթային փաթեթը 14.03.2019թ. թիվ Ե-91/19 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժին, խնդրելով համապատասխան ճշտումներ կատարել Շահումյան համայնքում բնակվող մայր և որդի Սարգսյանների վերաբերյալ, որոնք անձը հաստատող փաստաթղթեր չունեն: ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Մխիթարյանը իր 05.04.2019թ. թիվ 59/18-1494 գրությամբ պատասխանել է, որ համապատասխան հարցումներ են կատարվել ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ և Ոստիկանության Արմավիրի բաժին, որտեղից համապատասխանաբար ստացվել են հետևյալ պատասխանները՝ ա/ «Արմավիրի բժշկական կենտրոն ՓԲԸ-ում 2004թ. ապրիլի 25--30-ն ընկած ժամանակահատվածում իրենց բժշկական կենտրոն Արաքսի Երջանիկի Սարգսյան տվյալներով ծննդկան և նորածին երեխա չի ընդունվել և բ/ Արաքսի Երջանիկի Սարգսյանը ծնվել է ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղում, սակայն ամուսնությունից հետո համայնքում չի բնակվել, այժմ նրա բնակության մասին տեղեկություն չունեն: Միաժամանակ հայտնել են, որ Արմավիրի մարզի Հայկավանի համայնքապետարանում Արաքսի Սարգսյանի և նրա որդի՝ Գևորիկ Սարգսյանի մասին տեղեկություններ չունեն:

Այս տեղեկատվությանը պետք է հավելել, որ Շահումյան համայնքապետարանի և ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի համատեղ աշխատանքի արդյունքում Արաքսի Սարգսյանի անձնագրի հարցը լուծվել է: Նրան 17.04.2019թ. 033-ի կողմից տրվել է AS 0576148 համարի անձնագիրը և Արաքսի Սարգսյանը հաշվառվել է ըստ փաստացի բնակության վայրի՝ ՀՀ Լոռու մարզ, Շահումյան, 9-րդ փող. 1-ին նրբ. թիվ 1 հասցեով:

Այս գործընթացում առկա է դիտողություն. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի կողմից հարցումը կոնկրետ վայր և սեղմ ժամանակահատված է ընդգրկում /«Արմավիրի բժշկական կենտրոն ՓԲԸ, 2004թ. ապրիլի 25-30/ և չի կարող լիարժեք տեղեկատվություն ապահովել:

4. Հանձնաժողովը նյութերը նախապատրաստել է իրականացնելով համակողմանի և ամբողջական ուսումնասիրություն, փաստաթղթային փաթեթի ամբողջացում, հարցումների նախապատրաստում, մասնավորապես՝

ա/ ՀՀ Լոռու մարզպետի 02.05.2019թ. թիվ 01/104.3/03036-19 գրությամբ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ից պահանջվել է տրամադրել այն ամբողջական փաթեթը, որի հիմքով Գևորգ Սարգսյանը տեղավորվել է իրենց մոտ: Տրամադրված տեղեկատվությամբ պարզվել է, որ Վանաձորի մանկատան տնօրինությունը վերադասության կարգով 19.03.2019թ. ՄԴ/36-8492-19 դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, ներկայացնելով մասնավորապես հետևյալը. «13.03.2019թ. բազմամասնագիտական թիմը Շահումյան համայնքի ԽՀՀ-ի մասնագետի հետ համատեղ տնայց է կատարել մանկատան շահառու հանդիսացող երեխայի ընտանիք և նույն համայնքում հայտնաբերվել է Գևոր Սարգսյանի դեպքը /անուն, ազգանունը՝ ըստ մոր հայտարա-

ության/, որը մինչև օրս անտեսված է եղել բոլոր կառույցների կողմից: Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 11.03.2016թ. թիվ 8261-16 հրամանի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 7-րդ կետի՝ դեպքի մասին իրազեկվել է ՀՀ Լոռու մարզպետարան: Ըստ մոր հայտարարության երեխան՝ Գևոր Սարգսյանը ծնվել է Հայկավանում՝ տնային պայմաններում և նրա ծննդյան փաստը չի գրանցվել: Երեխան բնակվել է մոր հետ տարբեր համայնքներում, տարբեր աշխատանքներում օգնել է մորը, ներգրավվել տարբեր աշխատանքներում:

Ի պատասխան նշված զեկուցագրի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանի 05.04.2019թ. թիվ ԺԱ/ԳԳ-2-3/5836-19 գրությամբ փաստել է, որ «Չի առարկում, որպեսզի Գևոր Սարգսյանը մինչև ուսումնական տարվա ավարտը խնամվի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ում:»:

բ/ ՀՀ Լոռու մարզպետի 02.05.2019թ. թիվ 01/104.3/03043-19 գրությամբ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժնից պահանջվել է տեղեկատվություն տրամադրել նախնական տեղեկություններով ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղում ծնված, մոտավորապես 13-15 տարեկան Գևորգ Սարգսյանի մասին /մայրը՝ Արաքսի Սարգսյան/:

Ապա տվյալների լրացման անհրաժեշտությունից ելնելով ՀՀ Լոռու մարզպետի 03.05.2019թ. թիվ 01/104.3/03112-19 գրությամբ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժնից պահանջվել է հավելել տրամադրվելիք տեղեկատվությունը երեխայի հոր՝ Վարդան Հունանյանի մասով /ծնված ՀՀ Շիրակի մարզի Մանթաշ գյուղում, մահացած, երբ նշված երեխան եղել է 1 տարեկան 6 ամսական: Միաժամանակ, հավելում է տրվել, որ նորահայտ տվյալներով երեխան՝ Գևորգ Սարգսյանը /մոր հայտարարությամբ՝ ենթադրաբար/ ծնվել է 25.04.2004թ. և արդյո՞ք չի տրվել ծննդյան վկայական:

Ի պատասխան նշված երկու գրություններին ՔԿԱԳ-ի Վանաձորի տարածքային բաժնից 10.05.2019թ. թիվ 793 գրությամբ տրվել է հետևյալ պատասխանը. «Գևորգ Սարգսյանի ծննդյան ակտի գրանցման առկայության վերաբերյալ կատարված հարցումներից պարզ դարձավ, որ նրա ծննդյան ակտը ՔԿԱԳ-ի Արմավիրի և Մարալիկի տարածքային բաժիններում 2000 – 2007թթ. ընթացքում չի գրանցվել, միաժամանակ հայտնաբերվել է նրա մոր՝ Արաքսի Երջանիկի Սարգսյանի /ամուսնությունից հետո՝ Աբրահամյան/ ամուսնության ակտի գրանցումը Գագիկ Լադիմիրի Աբրահամյանի հետ /ծնվ. 17.05.1970թ./ ամուսնությունը գրանցվել է 16.08.1992թ. ա/գ 8 ՔԿԱԳ-ի Մարալիկի տարածքային բաժնում»:

5. ՀՀ Լոռու մարզպետի 02.05.2019թ. թիվ 01/104.3/03040-19 գրությամբ «Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ից /տնօրեն՝ Սամվել Հակոբյան, հեռ.՝ 094 957-515/ պահանջվել է տրամադրել տեղեկատվություն Շահումյան համայնքի տարածքում բնակվող Գևորգ Սարգսյանի դպրոցում ուսանելու մասին և նշել ի՞նչ փաստաթղթի հիման վրա է դպրոց ընդունվել: «Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ից

14.05.2019թ. թիվ 184 գրությամբ ստացվել է բացասական պատասխան («Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում Գևորգ Սարգսյան անունով աշակերտ չի սովորում):

6. ՀՀ Լոռու մարզպետի 02.05.2019թ. թիվ 01/104.3/03037-19 գրությամբ «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ից /տնօրեն՝ Լուսինե Բաղդասարյան, հեռ.՝ 094 38-62-62/ պահանջվել է տրամադրել տեղեկատվություն Շահումյան համայնքի տարածքում բնակվող Գևորգ Սարգսյանի և նրա մոր՝ Արաքսի Սարգսյանի առողջության մասին և նշել երբևիցե իրենց դիմած լինելու և բուժման կուրս անցնելու մասին: «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ից 14.05.2019թ. թիվ 6 գրությամբ ստացված պատասխանով փաստվել է, որ ինչպես Գևորգ Սարգսյանը, այնպես էլ նրա մայրը՝ Արաքսի Սարգսյանը երբևիցե առողջական հարցերով չեն դիմել բուժօգնություն ստանալու համար:

7. ՀՀ Լոռու մարզպետի 14.05.2019թ. թիվ 01/104.3/03412-19 գրությամբ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մարալիկի տարածքային բաժնից պահանջվել է տեղեկատվություն տրամադրել Արաքսի Երջանիկի Սարգսյանի /ծնվ. 16.02.2019թ./ ամուսնության/ամուսնալուծության գրանցման մասին:

Ի պատասխան նշված գրության ՔԿԱԳ-ի Մարալիկի տարածքային բաժնից 24.05.2019թ. թիվ Ե-173 ստացվել է հետևյալ պատասխանը. «Արաքսի Երջանիկի Սարգսյանի /ծնվ. 16.02.1972թ., ՀՀ Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ/ և Գագիկ Լադիմիրի Աբրահամյանի /ծնվ. 07.05.1970թ., ՀՀ Շիրակի մարզ, Գուսանագյուղ/ ամուսնությունը գրանցվել է Գուսանագյուղի գյուղական խորհրդում 16.08.1992թ. ակտ թիվ 8, տրվել է II-CL թիվ 440967 վկայականը: Ամուսնության գրանցումից հետո կինը ընդունել է ամուսնու ազգանունը՝ Աբրահամյան: Ամուսնալուծության ակտային չի հայտնաբերվել:»:

8. ՀՀ Լոռու մարզպետի 14.05.2019թ. թիվ 01/104.3/03413-19 գրությամբ ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանին ուղղված հարցմամբ պահանջվել է տեղեկատվություն ստանալ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ում բնակվող Գևորգ Սարգսյանի հնարավոր հայրերի մասին: Մոր՝ Արաքսի Սարգսյանի /ծնվ. 16.02.1972թ./ հետ ամուսնությամբ՝ Գագիկ Լադիմիրի Աբրահամյանի /ամուսնությունը գրանցվել է ՔԿԱԳ-ի Մարալիկի տարածքային բաժնում՝ 16.08.1992թ./ և երեխայի կենսաբանական հոր՝ Վարդան Հունանյանի /ծնվ. ՀՀ Շիրակի մարզի Մանթաշ գյուղում, մահացած մոտավորապես 2005-2006թթ./ հնարավոր տեղեկատվություն ստանալու մասին:

ՀՀ Շիրակի մարզպետի 06.06.2019թ. թիվ 01/04626 գրությամբ տրված պատասխան գրության մեջ հայտնել է հետևյալը. «Վարդան Հունանյանը բնակվել է ՀՀ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ գյուղում, մահացել է 2008 թվականին: Վ. Հունանյանի հարազատները չեն բնակվում համայնքում և նրանց գտնվելու վայրի մասին տեղեկություններ չկան:

Գագիկ Լադիմիրի Աբրահամյանը հաշվառված է ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Արտենի, Բաղրամյան փողոց, 6 շենք, բնակարան 17 հասցեով: Կնոջ և 5 երեխաների հետ փաստացի բնակվում են ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, Շիրակացի փողոց, 2-րդ

նրբանցք, տուն 17 հասցեում: Ըստ կնոջ՝ Ալինա Մարտիրոսյանի հայտարարության՝ Գ. Աբրահամյանը 2017 թվականին աշխատելու նպատակով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն:»:

9. ՀՀ Լոռու մարզպետի 14.05.2019թ. թիվ 01/104.3/03414-19 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանին ուղղված հարցմամբ պահանջվել է տեղեկատվություն ստանալ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ում բնակվող Գևորգ Սարգսյանի ծննդյան վերաբերյալ, նշվել է, որ նախնական տվյալներով Գևորգ Սարգսյանը ծնվել է 25.04.2004թ. /մոր հայտարարությամբէ ենթադրաբար/ ՀՀ Արմավիրի մարզի Հայկավան համայնքում՝ տնային պայմաններում: Եվ արդյո՞ք տրվել է ծննդյան վկայական:

Հարցմանը ի պատասխան Արմավիրի մարզպետը 12.07.2019թ. թիվ 01/15/04201-2019 գրությամբ պատասխանին կցել է Հայկավանի համայնքապետի 11.07.2019թ. թիվ 75 գրությունը, ըստ որի՝ «Համայնքում Գևորգ Սարգսյան անունով ծնունդ չի գրանցվել:»:

10. Անհրաժեշտաբար ևս մեկ անգամ հարցում է կատարվել Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժին՝ Միասնական տեղեկատվական համակարգից ճշտելու Վարդան Հունանյանի մահվան ակտի մասին տեղեկատվությունը /հիմք՝ ՀՀ Լոռու մարզպետի 18.06.2019թ. թիվ 01/104.3/04314-19 գրությունը/:

ՔԿԱԳ-ի Վանաձորի տարածքային բաժնից 20.06.2019թ. թիվ 1079 գրությամբ տրված պատասխանում փաստվել է, որ երեխայի հայրը՝ Վարդան Հունանյանը /ծնվ. 05.07.1964թ./ մահացել է 17.03.2007թ. և մահը գրանցվել է ՀՀ Շիրակի մարզում՝ 01.08.2007թ. ՔԿԱԳ-ի Արթիկի տարածքային բաժնում:

Երեխայի տարիքը որոշող Լոռու մարզային հանձնաժողովի 16.07.2019թ. նիստին հրավիրվել են տարբեր ժամանակահատվածներում գործին առնչված անձինք՝ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները /տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Էվոյան, սոցիալական աշխատող Լիլիթ Հովսեփյան, իրավաբան Սեդա Բեգլարյան, բժիշկ Աստղիկ Սահակյան/՝ երեխայի՝ Գևորգ Սարգսյանի հետ, Շահումյանի համայնքի ներկայացուցիչները /համայնքապետարանի աշխատակազմ,ի քարտուղար Ռաիսա Մինասյան, առողջապահական ընկերության տնօրեն Լուսինե Բաղդասարյան/՝ երեխայի մայրը՝ Արաքսի Սարգսյանը, Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետի տեղակալ Կարեն Պողոսյան, ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցները /Սվետլանա Ասրյան, Անի Ղազարյան/:

Ամփոփելով Հանձնաժողովի կողմից կատարած տեղեկատվության հավաքչական աշխատանքը և նիստի ընթացքում ընթացքում Հանձնաժողովի անդամների և Գևորգ Սարգսյանի գործին տարբեր ժամանակահատվածներում առնչված անձանց մասնակցությամբ կայացած շահագրգիռ քննարկումները և նրանց կողմից «Պատճառաբանական մաս»-ում շարադրված ապացուցողական տվյալների ճշտումը, այդ թվում՝ Գևորգ

Վարդանի Սարգսյանի ծննդյան տվյալները, ծննդյան վայրը, որոնց համար միակ աղբյուրը մոր հայտարարությունն է, երեխայի ներկայությամբ նրա հասունությունը կարելի է նույնականացնել առկա տվյալների հետ /երեխան մոր տվյալներով 15 տարեկան է, սակայն երեխայի հասունության առումով ավելի փոքր տարիքի է/, հնարավոր եղավ հանգել հետևյալ եզրակացության.

ա/ Գևորգ Վարդանի Սարգսյանը չի ունեցել ծննդյան վկայական, նա ծնվել է տնային պայմաններում և ծնունդը չի գրանցվել ՔԿԱԳ-ի մարմիններում:

Համադրելով երեխայի մոր՝ Արաքսի Սարգսյանի կողմից ներկայացված տվյալները երեխայի ծննդյան տվյալի վերաբերյալ, այն է՝ «ծնված 25.04.2004թ.» չի համապատասխանում նրա մեկ այլ պնդմանը, որ երեխան եղել է 1 տարեկան 6 ամսական կամ նրա խոսքերով՝ «Երեխան չոչ անող էր, երբ հայրը մահացել է» չի համադրվում ստացված այն տվյալի հետ, որ ստացվել է ՔԿԱԳ-ի մարմիններից, ըստ որի՝ «Վարդան Հունանյանը /ծնվ. 05.07.1964թ./ մահացել է 17.03.2007թ. և մահը գրանցվել է ՀՀ Շիրակի մարզում՝ 01.08.2007թ. ՔԿԱԳ-ի Արթիկի տարածքային բաժնում», Հանձնաժողովը հանգեց այն եզրակացության, որ Գևորգ Սարգսյանը չէր կարող ծնված լինել 2004թ., այլ 2006թ.: Երեխայի ծննդյան ամսվա և օրվա տվյալները թողնվել է մոր հայտարարությանը, որը հիշեցրեց «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Էվոյանը. «Գարուն էր, դեռ ձյուն կար»: Մնացած բոլոր տվյալները թողնվում են նույնը. ծննդավայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, Հայկական համայնք: Երեխայի ազգանունը թողնվում է նախնական տարբերակով՝ մոր ազգանունով՝ Սարգսյան:

Արդյունքում փաստվում է, որ՝

ա/ Գևորգ Վարդանի Սարգսյանը ծնվել է 25.04.2006թ., ՀՀ Արմավիրի մարզի Հայկական համայնքում

բ/ Գևորգ Սարգսյանի ծնողներն են՝

Հայրը՝ Վարդան Սերյոժայի Հունանյանը /ծնվ. 05.07.1964թ., մահացած՝ 17.03.2007թ./

Մայրը՝ Արաքսի Երջանիկի Սարգսյան /ծնվ. 16.02.1972թ./:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից՝

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 995-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգի» /հավելվածի 11-րդ կետ/ պահանջով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ, 56-րդ, 57 րդ, 58-րդ, 60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի թիվ 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 18-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ և 17-րդ կետերը՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ում բնակվող, տնային պայմաններում 2006թ. ապրիլի 25-ին ՀՀ Արմավիրի մարզի Հայկավան համայնքում ծնված Գևորգ Վարդանի Սարգսյանի ծննդյան վկայական տրամադրելու համար ՀՀ կառավարության 23.06.2005թ. «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգը սահմանելու մասին» թիվ 995-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգի» 11-րդ կետի պահանջներին համապատասխան տալ Հանձնաժողովի եզրակացություն: Գևորգ Սարգսյանի ծնողներ գրանցել՝ Վարդան Սերյոժայի Հունանյանին /ծնվ. 05.07.1964թ., մահացած՝ 17.03.2007թ./ և Արաքսի Երջանիկի Սարգսյանին /ծնվ. 16.02.1972թ./:

2. Միջնորդել Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժնին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ում բնակվող, տնային պայմաններում 2006թ. ապրիլի 25-ին ՀՀ Արմավիրի մարզի Հայկավան համայնքում ծնված Գևորգ Վարդանի Սարգսյանին ծննդյան վկայական տրամադրելու հարցում:

3. «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի սան Գևորգ Վարդանի Սարգսյանի փաստաթղթերը տարբեր պետական մարմիններ ներկայացնելու հարցում իրավասու անձ ճանաչել «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Էվոյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին /ՀՀ Լոռու մարզի Շահումյանի համայնքապետարան, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժին, «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժին, Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժին/ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական և/կամ դատական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ա.Ղուկասյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Վ.Ջաղինյան**